ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 1040-Ա «20» նոյեմբերի 2023թ.

# ՀՐԱՄԱՆ

## ՄԱՐԻՆԵ ԲԻՃՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասի, 20-րդ մասի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2.1-ին կետը, ինչպես նաև 2023 թվականի նոյեմբերի 16-ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված արտաքին մրցույթի հարցազրույցի մրցութային հանձնաժողովի եզրակացությունն ու Մարինե Բիճյանի անձնական դիմումը

հրամայում եմ՝

1. Մարինե Բիճյանին 2023 թվականի նոյեմբերի 20-ից ազատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 94-30.7-Մ3-1) պաշտոնից և 2023 թվականի նոյեմբերի 20-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 94-30.7-Մ2-1) պաշտոնին:

2. Մարինե Բիձյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

20.11.2023

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580649

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

ք. Գավառ